



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11 հոկտեմբերի 2024 թվականի N 203-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՔԱՐԱՀՈՒՆՋ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման և հաշվի առնելով Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 4-ի N 2/փ-399 դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը,

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս համայնքի «Սյունիք-2» միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերում ներառված Քարահունջ բնակավայրի համակցված փաստաթղթում կատարել փոփոխություն և քաղաքացի Նարեկ Հովսեփյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0.0500 հեկտար հնդավոր հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-110-0128-0013) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «բնակելի կառուցապատում» գործառնական նշանակությամբ՝ բնակելի տուն կառուցելու համար:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -10

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՂԱՋԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ  
ԱԲՈՒՆՑ ՎԼԱԴԻՄԻՐ  
ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏ  
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ  
ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ  
ԴԻԼԱՆՉՅԱՆ ՀԵՐՄԻՆԵ  
ԻՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ  
ՄԿՐՏՉՅԱՆ ՍՈՆԱ  
ՏՈՌՈՉՅԱՆ ԱՐՏԱԿ  
ՏՈՌՈՉՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ



**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՈՒՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԱՂԱՋԱՆՅԱՆ**

2024թ. հոկտեմբերի 11  
ք. Գորիս